իշխանութեան կողմանէ, և 7 գլխաւորք կախուեցան յԱնգլիացւոց։

### ԻՏԱԼԻԱ

Իտալիոյ վարչութիւնը առաջարկեց Եւրոպիոյ Տէրութեանց դեսպանաժողով մը հաւաքել, յորում մտածուի, թէ ինչ միջոցներով կարելի է անիշխանականաց դէմ առնուլ։ Ամէն տէրութիւնք ընդունեցան առաջարկը։ Զուիցցերի տակաւին հաւանութիւնը զրկած չէ։ Արեւելեան Պետութիւնք տուած են իրենց հաւանութիւնը, և Թուրքիա, կ՚ըսուի, խնդրած է որ անիշխանականաց կարգին մէջ դասուին նաև «երիտասարդ Թուրքք» և հայ յեղափոխականք։

Իտալիա ամենայն արթնութեամբ կը հսկէ, որ Մէնէլիքի և ռաս Մանկաշիայի մէջ գժտութիւնք ի Հապէշիստան՝ յետոյ ի վնաս չդառնան իտալական գաղթականութեան։

### ՉԻՆԱՍՏԱՆ

Սեպտեմբեր 22ի Ճանկհայէ հեռագիր մը կը ծանուցանէր, որ Չինաստանի Կայսրն Քուանկ-Սու սպանուեր էր թոյնով, և վարչութիւնը յանձներ է մայր կայսրուհին, ապա ըսուեցաւ որ իշխանութենէ հրաժարեր էր իւր մօրը զայն յանձնելով։ Սակայն ապա հասկցուեցաւ, որ այս ամէն լուրերը արդիւնք մ՚էին Անգլիոյ և Ռուսիոյ մէջ եղած մրցմանց։ Անգլիա՝ կայսեր միջոցով կ՚ուզէր շատ մը բարեկարգութիւնք մտցնել ի Չինաստան։ Ռուսիա հակառակ է այս ազդեցութեան և կայսրուհւոյն կողմը զօրացնելով կրկին յիշխանութիւն կոչեց զԼի-Քունկ-Չանկ, և աքսորել տուաւ յառաջադիմականները։ Կայսրը անկարող դրութիւն մը ստացաւ։ Անգլիա անմիջապէս վեց մարտանաւ յղեց Ուէյ-Հայ-Ուէյէ, որոնք թէպէտ ցարդ սպառնական քայլ մը չառին, սակայն Լի Քունկ Չանկ բողոքեց անգլիական նաւատորմղին Պէչիլի ծոցուն մէջ գտնուելուն դէմ, և ամբոխը քարեր նետեց անգլիական դեսպանատան քարտուղարին վրայ։

Նոյն օրինակ նախատինք մը ըրաւ նաև ընդդէմ Միացեալ Նահանգաց քարտուղարին, որ չինացի էր։ Անգլիոյ առաջարկութեամբ Ռուսիա, Անգլիա, Միացեալ Նահանգք և Գերմանիա նաւաստեաց գունդեր հանեցին ի ցամաք։ Իսկ ի Պէքին ամենայն ինչ հանդարտ է, և կ՚ըսուի՝ որ համաձայնութիւն մը սկսած է ընդ կայսր և կայսրուհին։

### ՍՊԱՆԻԱ

Սպանիացիք ամբողջովին ձգեցին զՊորտորիկօ՝ զոր գրաւեցին անմիջապէս Ամերիկացիք։ Կուբա կը յուսացուի որ պարպուի նոյեմբերի մէջ, իսկ Փիլիպպեանց խնդիրը շատ դժուարին պիտի ըլլայ սահմանել։ Ապստամբք ոչ Սպանիական հովանաւորութիւն կ՚ուզեն և ոչ ամերիկեան։ Ագուինալդօ Պարիզ նուիրակ մը զրկած է՝ դիտելու և իմացնելու դեսպանաժողովոյն որոշողութիւնքը։

Զինուորական ատեանը դատը սկսած է Կավիդէի պարտութեան, Սանտիագոյի անձնատրութեան և Զէրվէրայի նաւատորմղին խորտակման համար։

### ՔԻԼԻ

Քիլի և Արճէնդինա զՎիկտորիա Անգլիոյ թագուհին՝ իրաւարար ընտրեցին իրենց տարաձայնութեան։

Դարձեալ Քիլի և Պէրու՝ Սպանիոյ Քրիստինէ թագուհին իրաւարար ընտրեցին իրենց տարաձայնութեան։

Մ—Ն.

---

### ՔԱՂՈՒԱԾ ՅՕԴՈՒԱԾՈՑ ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ԹԵՐԹԻՑ

ԱՂԲԻՒՐ (Թիւ, 7–8), Տփղիս։

Արձանագրութիւններ – Ն. ԱԲ. ՏԷՐ ԱՒԵՏԻՔԵԱՆ։

ԱՐԱՐԱՏ (Յուլիս), Վաղարշապատ.

Քաղուածք ի կոնդակաց վեհափառ հայրապետի։ — Քաղուածք սինոդի օրագրութիւնից։ — Բաղէշի վանքերը։ — Տեղագրութիւն թեմին Հայոց Աստրախանի (շար.)։ — Մշտնջենական օրացոյց – Գ. Վ.։ — Ձայնաքանութիւն վրացերէն հայերէնից փոխառեալ բառերի (շար.) – Հր. Ց. ԱՃԱՌԵԱՆ։ — Գրախօսութիւն – Ս. Մ.։ — (Օգոստոս), Քաղուածք սինոդի օրագրութիւններից։ — Հոգեկան աշխատութիւն, Դր. Կրէպէլինի – Ս. Մ.։ — Ձայնաքանութիւն վրացերէն, և այլն. (շար.) – Հր. Ց. ԱՃԱՌԵԱՆ.

ԱՐ. ՄԱՄՈՒԼ (Սեպտ. 1), Զմիւռնիա.

Ճէյքօփիր (Ե.) (շար.) – Ա. ՆԱԻՐԵԱՆ։ — Տե-

digitised by A.R.A.R.@

ղագրական պատառիկներ (շար.)։ — Գալուստ Կոստանդեան։ — (Սեպտ. 15) Շէյքըսփիր — Ա. ՆԱԻԱՐԵԱՆ։ — Տեղագրական պատառիկներ (շար.)։

ԱՐԵՒԵԼՔ (Թիւ, 3791), Կ. Պոլիս։

Հայ թատրոնը Թրքահայոց մէջ (շար.) — ԲԱՆՍԱՍԷՐ։ — (Թիւ 3792) — (Նոյն՝ շարունակութիւն Բ.)։ — Նոյն Գ. (Թիւ 3793). (Թիւ 3802) Նոյն — Ա. Մ. Կ.։ — Գալուստ Կոստանդեան — ՏՈՔԹ. Մ. ՎԱՀԷ։ — Մեր կեանքէն — ՀՐԱՆՏ ԱՍԱՏՈՒՐ։ — Դրեանց (Թիւ 3797) — ՏԻԳՐԱՆ ԱՐՓԻԱՐԵԱՆ։ — (Թիւ 3803) Մոռցուած Գիրքին առթիւ (Օտեան) — ՏԻԳՐԱՆ ՀԻՒՆՔԷՐՊԷՅԷՆՏԵԱՆ։

ԱՐՄԷՆԻԱ (Թիւ, 15), Մարսիլիա։

Ալ հերի՛ք է խաբուինք — ՇԱՒԱՐՇ ՌՇՏՈՒՆԻ։ — (Թիւ 18) Կարեւորագոյն պէտքը — (Թիւ 19) Նոր կորուստ մ'ալ։ — Նոր հրատարակութիւններ։

ԲԻՒԶԱՆԴԻՈՆ (Թիւ 559), Կ. Պոլիս։

Գալուստ Կոստանդեան — Տ. Գ.։ — (Թիւ 564) Կանոնագիրք Հայոց և Կարգապահութիւն Հայոց մէջ — Մ. ՎԱՐԴ.։ — (Թիւ 568) Գ. Կոստանդեանի կտակը — ՈՒՂԵԽՈՐ։ — (Թիւ 570) Թատրոնն և իր գործիչներ (Դրեանց) — Յ. Բ.։ — Կովկասի Հայոց հետ — ԱՐՏԱԽԵՑԻՆ։ — Կանոնագիրք Հայոց, և այլն — Մ. ՎԱՐԴ։

ԲԻՒՐԱԿՆ (Թիւ 28), Կ. Պոլիս։

Հայ աշուղներ և ժողովրդական հայ երգիչներ (շար.) — Տ. Վ. ՓԱԼԵԱՆ։ — Մարաշու մէջ նշանաւոր տներ իրենց ծէսերով (շար.) — Յ. Մ. ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ։ — (Թիւ 30) Երզնկայի գաւառաբարբառը (շար.) — Ս. ԱՄԱՏԵԱՆ։ — (Թիւ 32) Հարեւանցի ակնարկ մը Թարօնի վրայ — Ս. Դ.։ — Մարաշու մէջ նշանաւոր տներ — Յ. Մ. ՎԱՐԺԱՊ.։ — Գերեզմանատուններ — Ա. ՀԱԲԷԼԵԱՆ։ — (Թիւ 31) Մարաշի մէջ նշանաւոր տներ — Յ. Մ. ՎԱՐԺ.։

ԾԱՂԻԿ (Թիւ, 11), Կ. Պոլիս։

Բամբասանք չէ, բանն ասանկ է — Ա։

ՀԱՆԴԷՍ ԱՄՍ. (Թիւ 10, 11), Վիեննա։

Արդի լեզուագիտութիւնը (շար.) — Հ. Գ. Մէն.։ — Եւդոկիոյ Հայոց գաւառաբարբառը (շար. և վերջ) — ՅՈՎՀ. ԳԱԶԱՆՃԵԱՆ։ — Հայերէն բարբառախօսութիւն — ԼԵՒՈՆ ՄՍԵՐԵԱՆՑ։ — Մ. Խորենացի ըստ պր. Ն. Մառի — Ե. ԼԱԼԱՅԵԱՆՑ։ — Հազարապետ։ — Մատենախօսական. Բառգիրք աշխ. գրաբ. առ. թարգմ. — ԱԴՈՆՑ։ — Հիտտիտներն ու Հայերը ի պ. Գ. Եէնսէնէ (շար.)։ — Եղիսաբեթպոլսոյ Հայոց հեղինակութիւնը Դրանսիլուանիոյ ազգայնոց վրայ (շար.) — ՅՈՎՀ. ԱՆԵՑԻ։ — Այր և այլք, — Ծաղկափունջ։ — Քաղաքական տեսութիւն։

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ (Թիւ 30), Կ. Պոլիս։

Շերամաբուծութիւնը Բասմէջեանի դրութիւնով (շար.) Ղ. ԲՈԼԱՅ։ — (Թիւ 29) Նոյն։ — Գիտական մանրալուրեր։

ՄԷՃՄՈՒԱԻ ԱԽԲԱՐ (Թիւ 2553), Կ. Պոլիս։

Դպրոց և դպրոցականք — ԳԱԽԱՌԱՑԻ ՈՄՆ։ — (Թիւ 2558) Հոգեւոր կրթութիւնք Անկլիքան եկեղեցւոյ մէջ — Ն. Յ. Վ. ՓԱՓԱԶԵԱՆ։

ՄՇԱԿ (Թ. 149), Տփղիս։

Կարդացողները քիչ են։ — (Թիւ 150)։ — Դաւիթ Թուրեան։ — (Թիւ 146) Աշխարհագրական հայրենասիրութիւն։ — (Թիւ 159) Գեղարուեստը և նրա ծառայողների վիճակը մեզանում — ԳԵԴԷՈՆ ՄԵՐԱՂԵԱՆՑ։ — (Թիւ 166) Անդրէաս արծրունի (I, II, III, IV, Նոյնը (Թիւ 168, 169)։ — (Թիւ 166, 167, 168) Արծրունիների տոհմը (շար.)։

ՄՈՒՐՃ. (Թիւ 7, 8), Տփղիս։

Խորտակուած կեանք. վէպ (շար.) — ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑ։ — Սև ծովի ափերին (շար.) — ՅԱԿՈԲ ՄԹԻՔԱՏԵԱՆ։ — Ինքնակրթութիւնը և գրքերի ընթերցումը Ն. Ի. Կարէեւ'ի. — թարգմ. Ա. ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ։ — Հանրի Հայնէ (շար.) — ԱՐՇԱԿ ՉՕՊԱՆԵԱՆ։ — Հիւսիսափայլ և Ս. Շահազիզեանի Բանաստեղծութիւնը (շար.) — ԿԱՐ. ԿՈՒՍԻԿԵԱՆ։ — Ի՞նչ է արուեստը ըստ Տոլստոյի (շար.) — Ա. ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ։ — Գրախօսութիւն (շար.) — Ս. ՉԷԼԻՆՍԿԻ։ — Գաւառական նամակներ։ — Զանազան լուրեր։

ՆՈՐ ԴԱՐ (Թ. 153), Տփղիս։

Դաւիթ Թուրեան — Վ. ՀԱՅԿԱԶՆ։ — (Թիւ 157) Նուիրական չիրիմներ — ԳՕՇ։

ՆՈՐ ԿԵԱՆՔ (Թիւ 18), Լոնտոն։

Երկու դար — Ա. ԱՐՓԻԱՐԵԱՆ։ — Օրուան կեանքը — ՀՐԱԶԴԱՆ։ — Հայաստան 14րդ դարուն — ՍԸՐ ՃՈՆ ՄՈՆՏԷՎԻԼ։

ՊԱՏԿԵՐ (Թիւ, 10), Կ. Պոլիս։

Անանիա Նարեկացի (շար.) — ԳՐԻԳՈՐ Վ. ԱՇԸԳԵԱՆ։ — (Թիւ 11) Նոյն (շար.)։ — Հատուկտորք սուրբ պատարագին, և այլն — Ս. Վ. ՆԱԶԱՐԷԹԵԱՆ։

ՏԱՐԱԶ (Թիւ 35), Տփղիս։

Տաղանդ և աշխատանք — Գ. ԵՂԻԿԵԱՆ։ — (Թիւ 36) Անդրէաս Արծրունի։ — Հայկական Թատրոն — Ս. Թ.։

digitised by A.R.A.R.@